

ՆՈՐԱՀԱՅՏ ՄԻ ԷԶ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ տպագրության պատմությունը հարուստ է հետաքրքրական շատ դեպքերով ու դեմքերով, որոնք հաճախ իլուս են մեզ մեր ապրած ժամանակաշրջանից, տանում այն հեռու ժամանակները, երբ մեր տպագրության ուսհվիրանները գործում էին նյութական ու ֆիզիկական գրկանքների մեջ, հաճախ կյանքի գնով հարստացնելով ու պահպանելով մեր բազմադարյան մշակույթի գոհարները:

Այսօր ահա մեր հետաքրքրության առարկան են Ժմ դարի սկզբին Կոստանդնուպոլսում հրատարակված երկու «Յայսմատրքաներ», որոնց օրինակները պահպան են երևանի Ալ. Մշասնիկյանի անվան պետական հանրային գրադարանի հնատիպ գրքերի ֆոնդում¹, Մշատողի անվան Մատենադարանի գրապահոցում² և Հայաստանի պետական պատմական թանգարանի գրապահոցում³:

«Յայսմատրք»-ը Եկեղեցու հոգևոր հայությունի, մարտիրոսների վարքին, նրանց հրաշագործություններին ու կրած տանշանքներին նվիրված պատմությունների ժողովածու է, Եկեղեցիներում համապատասխան տոններին կարդալու համար:

Անցյալում «Յայսմատրք»-ի նման ստվարածավալ գրքերի տպագրությունը շափա-

զանց ծանր ու դժվարին մի գործ է եղել Մինչև Ժմ դարը հայ տպագրիչներից ու մեկը շի ձեռնարկել նման դժվարին աշխատանքի: Նույնիսկ Ոսկան Երևանցին, որ առաջինը կարողացավ տպագրել հայերեն Աստվածաշունչ՝ 1666 թվականին Ամստերդամում, շի փորձել իր ուժերը «Յայսմատրք»-ի տպագրության գործում: Այդ բանը շարեցին նաև նշանավոր Վանանդեցիները Ամստերդամում, որոնք իրենց տպագրական բարձր արվեստով հայտնի էին ու միայն հայության մեջ, այլ նաև օտարներին:

«Յայսմատրք»-ի առաջին տպագրությունները իրագործվեցին Կոստանդնուպոլսում բազմահմուտ տպագրիչներ Գրիգոր Մարգանեցու և Աստվածատուր Դպրի կողմից:

Մինչև այժմ բանասիրությանը հայտնի է «Յայսմատրք»-ի առաջին տպագրությունը, որը կատարվել է 1706 թվականին Գրիգոր Մարգանեցու կողմից: Այդ գրքի երկրորդ տպագրությունը համարվում էր նույն տպարանատիրոջ 1730 թվականի վերահստարակությունը. սակայն այժմ պարզվում է, որ գոյություն ունի «Յայսմատրք»-ի նաև մի ուրիշ՝ «առաջին հրատարակություն», դարձալ կատարված Կոստանդնուպոլսում, գրեթե նույն ժամանակի Մեր ձեռքի տակ է նույն՝ 1706 թվականը կրող այդ «Յայսմատրք»-ը, որի տպագրիչն է հայ տպագրության պատմության մեջ հայտնի Աստվածատուր Դպիրը.

¹ Ա 473, 475, 1040, 1392:

² Ա 1417, 1418, 1421, 1587, 1750:

³ Հայաստանի պետական պատմական թանգարանի

որը շատ մեծ ու գնահատելի աշխատանք է կատարել Հայ ժողովրդի մտավոր ու հոգևոր զարգացման գործում:

Աստվածատուր Դպիրը (կամ Ապոլեխցին), որպես ինքնուրուց տպագրիչ ու տպարանատեր, իր գործունեությունն սկսել է 1698 թվականից։ Ստորև բերում ենք Աստվածատուր Դպիրի «Յայսմատուրք»-ի տիտղոսաթերթը, որը մինչև այժմ նկարազրկած չի եղել մեր բանասերների կողմէից։

«Յայսմատուր որ բառ պատշաճի ատու իւրում կարգի ընթեռնուն Սուրբ Եկեղեցին: Նախախնամուրեամբն անհասանելոյ, մարդասիրութեան և գերազանցել գթութեամբ ամենաբարի կամաց արարչագործողին բոլորից, որ ամենատատն է առ ՚ի Հեղումն անձառելոյ իւրական շնորհաց յարարածս ձեռաց իւրոց առ ՚ի լրումն կարեաց ոգեկանաց և մարմնականաց. նոյնինքն քաղցրութեամբն իւրով վերառեալ զանաբանութիւն մեր և շարժեաց զմեր վերստին ՚ի գործս յայս: Ուստի և մեր ըղձիւ հայցեսցուք տալ յաստուածայնոյ զօրութեանէ իւրմէ զօգնականութիւն անկարութեան մերոյ առ ՚ի յաւարտ ածել ամբողջաբար զաստուածային գիրքս որոց բազումք կատարեցան ի Քրիստոս և գրեցին զանուանս նոցա ՚ի գիրս որ կոչի Յայսմատուր ըստ պատշաճի աւուր իւրում կարգի ընթեռնուն Զմատեանս ներ պարունակող շարադրութեամբ նախնեացըն մերոց և ծշմարտասիրաց Թարգմանչացն որ թարգմանեցին զկատարումն սրբոց, ոմանք մարգարէացան ոմանք նահատակեցան և հեղին զարիւնս իւրեանց ՚ի յերկիր և ոմանք պահօք և աղօթիւք և ոմանք զըրօք և ողորմութեամբ ոմանք բնակելով ՚ի լերինս և ՚ի փափարս և ՚ի ձերպս վիմաց որ եղաք աստ ՚ի վայելլութիւն ժողովուրդեան և ՚ի պայտառութիւն Սուրբ Եկեղեցոյ, և ևս վասն հասարակաց օգտութեան Ազգին Հայկազնեաց: Տպագրեցեալ բարեխօսութեամբ Սրբոյն Մինասայ զօրավարին: Արդ սկիզբն էառ տպագրութեան աստուածայնոյ ասպիս ի թույն Փրկչին մերոյ Քրիստոսի: Ծէծ և Զ, Խոկ ՚ի հայոց թուականի ՌժՇԵ, ՚ի սեպտեմբերի ամսո. Ի, ի հովվապետութեան տեսան.... սրբազան Կաթուղիկոսի վերաբազմողի յԱթոռ Գրիգորի Սրբոյ Լուսաւորչին որ ՚ի Սուրբ Էջմիածնի Սուրբ Երուսաղէմա և ՚ի մայրաքաղաքիս առաջնորդութիւ Աւետիք և արձի եպիսկոպոսին: ՚ի տպարանի Պարօն Կարապետի որդի Աստուածատուր գպրի: Յերկրիս օսմանցուց ՚ի քաղաքիս Բուզանտինեա որ կոչի Կոստանդնուպոլիս Սպասաւորութեամբ և սրբագրութեամբ անարհեստ և անիմաստ Յարութիւն Մեղրիցոյ Եաշակերտ Աստուածատուր դպրի» (տե՛ս եկար 1):



**Նկար 1.— Աստվածատուր դպրի «Յայսմատուբ»-ի
տիտղոսաթերթը:**

Գիրքն ունի 1043 երկայում զարդափակ էջ: Շարվածքի շափը շրջանակով $17 \times 27,2$ սմ. է, տիտղոսաթերթը՝ զարդափակ: Գիրքն ունի ամբողջական էջ զբաղեցնող և զարդանկարներով դրախակված երկու փոքրագիր պատկերներ, որոնցից մեկը կրկնվում է 260 էջում, և 49 փորադիր ($8 \times 11,6$ սմ.) պատկերներ, որոնցից մի քանիսը նույնական կրկնվում են: Գիրքը հարուստ է նաև բազմաթիվ գլխազարդերով, վերջնազարդերով, լուսանցազարդերով ու զարդագրերով: Բնագիրը տպագրված է 12 կետաշափի բոլորագրերով: Օգտագործված է երկու տեսակի թուղթ՝ հաստ և բարակ:

Աստվածատուրն իր գրքի տպագրությունն ավարտել է 1708 թվականին, ինչպես նշված է գրքի հիշատակարանում՝ «Աւարտեցաւ սուրբ մատենաս ի թվին հայոց ՈՃԾէ և փեսրվարի ԺԴ» ($1157 + 551 = 1708$, փեսր-վարի 14):

Այսպիսով, այս «Ցայսմատրեք»-ի տպագրութունը սկսվել է 1708-ի սեպտեմբերին, ինչպես նշված է տիտղոսաթիրթում, և պարտվել 1708-ի փետրվարի 14-ին:

Հայ բանասիրության մեջ խոսվել է 1708 թվականի մի «Յայսմատուրք»-ի մասին։ Այդ տպագրության առթիվ հիշատակություն ունի Հ. Ա. Ղազիկյանը իր «Նոր մատենագիտության» մեջ։ Նա գրում է. «Յայսմատուրք»-ի ուրիշ տպագրություն մը ևս եղած է, զոր կիմանամ Տրդատ եպիսկոպոս Պալյանի մեկ հոդվածնեն, («Արևելյան մամուլ», 1897, էջ 208), Կ. Պոլիս, համի 1708։ Գրքին առաջին թերթն ինկած է, կըսէ Պալյան, ու կդնե հիշատակարանը, որ է հետևյալը...», և մեջ է բերում ամբողջ հիշատակարանը⁴։ Սրանից երևում է, որ Ղազիկյանն ինքը գիրքը չի տեսել, նրա մասին նշել է օգտվելով Պալյանի հոդվածից։

Այժմ տեսնենք, թե ի՞նչ է գրում Տրդատ եպիսկոպոս Պալյանն իր այդ հոդվածում։ «... Մեր եկեղեցական գրյանց կարգեն, հետևյալ երկու գրյանքն ևս, որ մեր Կեսարիո Ս. Կարապետի վանուց մատենադարանին մեջ կգտնվին, հայերեն հին տպագրություններու շարքին մեջ հիշատակված չեն։ Որոնց մին «Յայսմատուրք» է և մյուսն Տոնացուց։ Առաջինը տպագրված է 1708 Կ. Պոլիս ի տպարանի Սրապիոնի... բայց դժբախտաբար «Յայսմատուրք»-ի առաջին թերթն, որ գրքին ճակատը պիտի ըլլար, ինկած է։ Մենք այս-տեղ հառաջ բերելով հիշյալ երկու գրյանց հիշատակարաններն, մասնաւորապես բոլոր բանասեր և հնասեր ընթերցողներու ուշադրությանը կհանձնենք պարագա մը, որ հետաքրքրս կան չ։ ... և այժմ միմյան հիշյալ «Յայսմատուրք»-ին հիշատակարանին կտեղեկանը թե 1708-ին Կ. Պոլսոյ մեջ հանուն Սրապիոնի տպարան մը ևս կա եղեր հաստատված։ Ահավասիկ այս պարագան է, որ հետաքրքրական չ։ և արժանի ուշադրության։ Եվ չկարծեք, թե մեր այս կարծիքն որևէ հաստատ հիման մը վրա հաստատված չէ այս տպարանն միմիայն «Յայսմատուրք» մը տպագրելով ապա գործունեութենք դադրած չպիտի ըլլա, այլ ասկէ հառաջ և հետո արտադրած պիտի ըլլա նաև ուրիշ գրյանք ալ, ուստի կինդրենը ամեն հետաքրքիր բանասերներեն, որ եթե հանդիպին նույն տպարաննեն հրատարակված որևէ ուրիշ տպագրություն մը, անմիշապես հրատարակության տան զայն, ի գիտություն և հօգուս հայ տպագրության պատմության»⁵։

Ապա Տրդատ եպիսկոպոս Պալյանը տպալիս է գրքի նկարագրությունը և բերում է հիշտա-

⁴ Հ. Ա. Ղազիկյան, «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի», Վենետիկ, 1912, Բ, էջ 49—50։

⁵ Տրդատ եպիսկոպոս Պալյան, «Արևելյան մամուլ», 1897, էջ 207—209։

կարանը, որն ամեն ինչով համընկնում է մեր ձեռքի տակ եղած «Յայսմատուրք»-ին, այն տարրերությամբ միայն, որ մեր օիրնակն ունի նաև տիտղոսաթերթ։ Այս տիտղոսաթերթի բացակայությունն էլ Տրդատ եպիսկոպոս Պալյանին հանգեցրել է ոչ ճշշտ եղած կացության՝ թե՛ տպագրության թվականի և թե՛ տպագրողի հարցում։

Այս «Յայսմատուրք»-ի քննությունը պարզէց, որ հիշատակարանում նշված Սրապիոնը ոչ այլ ոք է, եթե ոչ Աստվածատուրի տպարանի մի աշխատող և գուցե Աստվածատուրի ազգականը և նրա առաջադրանքով հիշատակարան գրողը։ Հիշատակարանում Սրապիոնի անունը հիշատակվում է այսպես. «... Դարձեալ յիշեցէք զտպող մատենիս այս աշխատաւոր Սրապիոնն էպուէնիսիցի և զծնօղքն իմ հանգուցեալ...»։ Մինչդեռ, ինչպես գրքի տիտղոսաթերթից պարզ երևում է (տե՛ս նկար 1), գիրքը տպագրվել է Աստվածատուրի հայտնի տպարանում, որ նշանակում է, թե տպագրին ինքն Աստվածատուր Ապուլեխցին է։ Ավելացնենք նաև, որ Կոստանդնուպոլսում Սրապիոնի անունով որևէ տպարան որևէ ժամանակ չի եղել։

Այժմ տեսնենք, թե ի՞նչ կապ կա Գրիգոր Մարգվանեցու տպագրած «Յայսմատուրք»-ի և Աստվածատուրի վերոհիշյալ տպագրության միջև։

Մարգվանեցու հրատարակության վրա կամիայն մի թվական՝ 1706։ Մարգվանեցու տպարանի պատմությունից երևում է, որ դա կարող է լինել միայն գրքի տպագրության ավարտման տարեթիվը։ Տարբեր աղբյուրներից հայտնի է, որ Մարգվանեցին իր «Յայսմատուրք»-ի տպագրության վրա աշխատել է 12 տարի⁶։

Այդ «Յայսմատուրք»-ը մի շատ հոյակապ, շքեղ հրատարակություն է, տիտղոսաթերթն առնված արձանազարդ խորանի մեջ, որի աջ կողմում փորագրված է «Ամծծ» (1706) արարեալ ձեռամբ Գրիգոր դպրի։ Գրիգոր ոմի ամբողջ էջը զբաղեցնող (12×33 մ.) յոթ մեծադիր շքեղ պատկերներ, որոնց տակ փորագրված է նկարի անունը՝ «Նկարեալ և փորեալ ձեռամբ Մկրտչի որդի Գրիգոր տպագրի անարժան դպրի», 1154։

Գրքի հիշատակարանում Մարգվանեցին գրում է. «... Եւ իմն էր մտածման բանիս՝ սկիզբն եղի արհեստ կաղապարաց տպարանիս։ Ոչ ումեմնէ տեսանելով իմ և ոչ՝ ի Հռոմ գնալով և ոչ՝ ի յայլմէ արհեստաւորաց տեսեալ և կամ՝ ի նմանէ ուսեալ։ Վասն որոյ իրրեւ զմըթացեալ ամպ ընկալաւ զիս սուգ

⁶ Առ, «Հայկական տպագրություն», Թիֆլիս, 1902, Բ, էջ 150 և Գ. Լանյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը», Երևան, 1958, էջ 127։

տրումութեան, և տարակուսանք վիճագոյն... Դարձեալ 'ի մէջ վեհագոյնն էր մտածական կրթութեանս ընկղմելով զորպիսութիւն իրացն. եկն որհնեալ հոգի Թեօմիրճի զատէ հոետոր և Ֆիլիսոփիա իմաստասէրն Երեմիա Զելեպին: Զի և նա յառաջագոյն բազում շանս և աշխատանս կրցեալ էր վասն գործարանիս և յառաջ ածեալ...»:

Այստեղ խոսքը վերաբերում է պոլսահայ նշանավոր մտածող և քաղաքական գործիչ Երեմիա Զելեպի Քյուուլցյանի հիմնած տպարանին, որը գործել է Կոնստանդնուպոլիսում 1677—1678 թվականներին, տպագրելով Երկու գիրք: Մարզվանեցին, բացելով իր տպարանը, նախապես փորձել է օգտագործել Քյուուլցյանի տպարանից մնացած տառերը, որոնք սակայն դուր չեն եկել նրան: «Սակայն զգիր նորին էր նուազ և նիշար: Ուրոյ կաղապարացն տեսեալ վերծանուցի և նոր իմն սկիզբն եղի»: Մարզվանեցին, լինելով հմուտ նկարիչ և փորագրիչ, ինքը պատրաստում է Հայերեն տառերի նոր Հայրեր ու մայրեր և ձուլում սեփական տառերը: Միաժամանակ Մարզվանեցին պատրաստում է փորագրի պատկերներ, զարդեր ու զարդագրեր: Այդ ամենը մի հիմնական նպատակ է հետապնդում՝ տպագրել Հայերեն «Յայսմաւուրք»:

Մարզվանեցու «Յայսմաւուրք»-ի հիշատակարանում կա մի շատ հետաքրքրական հատված, որը հետեւյալն է. «...Եւ իմ աստման է ոգույն դառնացելոյ պատահեաց ինձ Երկուց ոմանց բազում վնաս՝ զոր ու զրեցից զանուանէ նոցին. զի մի ամօթ կրեսցն ի լսողաց ի ասդէն և կամ վատ անուն ընկալցին՝ ի մէջ ազգաց զի յաղագ բազում ագահութեանց իրեանց յափշտակեալ դարանագործութեամբ ի ձեռաց իմոց զամենայն տպագրեանս իմ ծաղկագրով և այլն ամենայն և ոչ մի ինչ մաս մի բնաւ ոչ ընկալայ: Բայց զոր ինչ արարին ընդ իս՝ դատ արասցէ Աստուած ի մէնջ իմ և ի մէնջ նոցայ: Վասն որոյ և իմ մնացեալ խեղճ և ողորմելի զի հատաւ սէր իմ և մնացի անհոյս՝ և յունայն ի ընչից և դրամից»:

Այս տողերից պարզ է դառնում, որ Մարզվանեցուն դժբախտությունն է պատահել, նա զրկվել է իր տառերից, պատկերներից և զարդերից, որոնց վրա նա տարիների շանք էր թափել: Սակայն հիշատակարանի շարունակությունը ցույց է տալիս, որ տարիների աշխատանքի արդյունքը կորցրած Մարզվանեցին հուագրվում է՝ հիշելով Ավետարանի խոսքերը. «Եթէ ոք հայցէ գտանէ, և որ բախէ բացցի. և որ խնդրէ տացի նմա»: Զինվելով համբերությամբ և հիշելով Ոսկան Երևանցու կրած տառապանքները, Մարզվանեցին նորից

է գործի անցնում և մեծ շարշարանքով կարողանում է նորից ստեղծել և տառեր, և պատկերներ, և զարդեր, որոնցով էլ սկսում է և 1706 թվականին ավարտում իւ «Յայսմաւուրք»-ի տպագրությունը:

Ահա թե ինչպիսի՞ փայփայանքով է Մարզվանեցին գրում իր աշխատանքի մասին. «...Եւ ամենայն զանազան ձագագրերով փառքերով և զեղեցիկ կանոններով և մեծամեծ խորանից փատեալ զարդարանօք զարդեցի. և պատկերս ըստ իւրոյ պիտոյից՝ նկարեալ իմով և քանդակեալ փորուածով: Երեմն և Երեմն նուալէր սիրտ իմ և ցնդէր միտք իմ, նեղանայր սիրտ իմ. ցամաքէր զօրութիւն իմ: Եւ լոյս աշացս Երեմն նուալիւր և յուշ կու զնայր ի բարակս հայեցողութեանց փորուածոյ պատկերաց...»:

Սակայն Մարզվանեցու հիշատակարանում հայտնված դառն կսկիծի խոսքերը ուշագրություն են Հրավիրում նաև այլ տեսակետից: Ո՞ւմ սեփականությունն են դարձել առաջին անգամ նրա պատրաստած տառերը, պատկերներն ու զարդերը: Զէ՝ որ այն անձը, որը դարձել է այդ պարագաների տերը, անշուշտ նրանց պետքն ունեցել է: Վերջապես, չէ՝ որ այդ տառերն ու պատկերները պետք է օգտագործված լինեն ինչ որ տեղի Ահա հենց դրա զաղանիքն է բացում Աստվածատուր Ապուշիսցու վերը նկարգրված «Յայսմաւուրք»-ի ուսումնասիրությունը: Հայտնի է, որ նախապես Մարզվանեցին և Աստվածատուրը աշխատել են միևնուն տպարանում⁷ և միայն 1698 թվականին, «Տաղարան»-ի տպագրությունից հետո, Աստվածատուրը բաժանվում է հիմնում է իր սեփական տպարանը: Հայ տպագրության պատմությունը քիչ զեպքեր մի տալիս անցյալի հայտնի տպարանների համատեղ աշխատանքների մասին: Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ տպագրիչների միջն վեճեր են ծագում և բաժանվելիս հարկ է լինում տպագրական կայքը բաժանել: Արդյոք մի այդպիսի վեճ էլ չի ծագել Գրիգոր Մարզվանեցու և Աստվածատուր Դարի միջև: Հավանաբար Մարզվանեցու հիշատակարանում գրված դառն խոսքերը պատմում են Մարզվանեցի-փորագրիչի համար՝ վեճի և բաժանման անբարենպաստ ելքի մասին, երբ նրա պատրաստած փորագրությունները, ինչ-ինչ պատճառներով, մյուս կողմին են բաժին ընկել: Այդ ենթադրության համար բավական հիմք են տալիս Աստվածատուր դպրի «Յայսմաւուրք»-ի մեջ օգտագործված պատկերներն ու զարդերը, որոնց մի մասը պատրաստված

⁷ Տե՛ս, օրինակ, Թեոդիկ, «Ճիպ ու տառ», Կ. Պոլիս, 1912, էջ 54:



Նկար 2.— Աստվածատուր դպրի «Յայսմատուրք»-ի շքեղապարդ էջերից մեկը:

Են Գրիգոր Մարզվանեցու ձեռքով և կրում են նրա ստորագրությունը՝ «ԳՐ»⁸:

Այսպիսի «ԳՐ» տառերի մենք հանդիպում ենք նաև Գրիգոր Մարզվանեցու տպագրած «Յայսմատուրք»-ի պատկերների վրա⁹:

Աստվածատուրի «Յայսմատուրք»-ի նկարների մյուս մասը հավանաբար փորագրել է ինքը՝ Աստվածատուրը¹⁰, կամ պատկիրել է մի ուրիշի: Այդ նկարները իրենց ոճով, ինչպես նաև կատարման ավելի ցածր մակարդակով միանգամայն տարբերվում են վերոհիշյաներից: Օրինակ, Աստվածատուրի «Յայսմատուրք»-ի 133 կամ 260 էջերի պատկերները երբ համեմատում ենք նույն գրի 525 կամ 388 էջերի պատկերների հետ, անմիջապես նկատում ենք առաջինների ավելի անվարժ փորագրությունները և վերջինների բարձր արվեստը: Հետաքրքրական է նշել նաև, որ Աստվածատուրի «Յայսմատուրք»-ի 667-րդ

⁸ Տե՛ս Աստվածատուր դպրի «Յայսմատուրք»-ի 94, 125, 417, 525, 565, 719, 811 և այլ էջերի պատկերները:

⁹ Տե՛ս, օրինակ, էջ մի՛ն-ի նկարը:

¹⁰ Գ. Լևոնյանը նշում է, որ Աստվածատուր Դպրիը պարզել է նաև փորագրությամբ (տե՛ս նույնի հիշված աշխատությունը, էջ 132):

էջում եղած լուսանցազարդը (տե՛ս նկար 2-ի լուսանցազարդը), որին նույնությամբ հանդիպում ենք նաև Գրիգոր Մարզվանեցու «Յայսմատուրք»-ի և նրա տպագրած այլ գրքերի էջերում, Մարզվանեցու ոճին շատ բնորոշ մի զարդ է:

Աստվածատուր Դպրի «Յայսմատուրք»-ի մեջ եղած այն պատկերները, որոնք մեր կարծիքով Գրիգոր Մարզվանեցունն են և որոնց մի մասը կրում են նրա ստորագրությունը, իրենց մտահղացմամբ նույնն են, ինչ որ Մարզվանեցու «Յայսմատուրք»-ի մեջ եղածները: Միայն Աստվածատուրի տպագրության մեջ այդ պատկերները համեմատաբար ավելի քիչ են մշակված, երբեմն կատարված փոքր ինչ պրիմիտիվ, մինչդեռ Մարզվանեցու գրքում նույն այդ պատկերները ավելի մշակված են և հասցված մեծ վարպետության:

Այսպիսով, մենք գործ ունենք երկու «Յայսմատուրք»-ների մեջ միևնույն նկարչի ձեռքով նկարված միևնույն նկարների երկու կարգի տարբերակների հետ, ըստ որում նկարների մի խումբը (Գրիգոր Մարզվանեցու հրատարակության միջինը) իր արվեստով ավելի ճռի ու կատարյալ է մյուսից (Աստվածատուրի հրատարակության պատկերներից):

Անշուշտ միևնույն պատկերները երկրորդ անգամ փորագրելիս նկարիչն ավելի հմտացել է և ավելի հաջող է փորագրել: Տարօրինակ է թվում նաև հետեւյալ հանգամանքը, որ Աստվածատուր դպիրը իր գրքի հիշատականում այնքան հոգածարությամբ և երախտագիտությամբ խոսելով իր տպաբանի բոլոր աշխատողների մասին, ոչ մի խոսք չի ասել պատկերներն ու զարդերը փորագրողի վերաբերյալ:

Մտածելու առիթ է տալիս նաև միևնույն քաղաքում, միևնույն ժամանակ նույն մեծադիր գրքի տպագրության փաստը: Ի՞նչպես բացատրել այս աննախադեպ երևույթը, Գրա պատասխանը պետք է գտնել հետեւյալում: Մարզվանեցու կողմից առաջին անգամ պատրաստված պատկերները հատուկ նշանակված էին «Յայսմատուրք»-ի և ոչ թե մի ուրիշ գրքի համար (ինչպես ինքն է ասում՝ «Եւ պատկերս ըստ իրոյ պիտոյից նկարեալ իմով և քանդակեալ փորուածով...»): Պատի այն անձը, որին անցել էին, կամ որին վաճառել էին այդ պատկերների տախտակները, կարող էր դրանք նպատակահարմար ձեռվ օգտագործել միայն «Յայսմատուրք»-ի տպագրության մեջ: Այս ենթադրությունները, իհարկե, որևէ ստվեր չեն կարող զցել Աստվածատուր Դպրի գործունեության կամ անձի վրա, որովհետև հայտպագրության այդ քրտնաշան մշակի ազնվությունը և հասարակական վաստակը հայ մշակութի զարգացման գործում ակն-



Նկար 3.— Ս. Գրիգոր Լուսավորիչը, Տրդալ թագավորը և Լուսավորչի տանջանքները:

հայտ է: Նույնը կարելի է ասել նաև Մարզվանեցու մասին, որի սիրութ սակայն, ինչպես նրա հիշատակարանն է ցուց տալիս, ժամանակին ցավել է խորապես:

Այժմ դժվար է ճշտությամբ որոշել, թե ավելի քան երկու ու կես դար առաջ տեղի ունեցած բաժանման ժամանակ ի՞նչ կարգի է եղել վեճը, և ո՞վ է եղել ավելի իրավացի: Գուցե ինչ որ երրորդ անձ է անախորժ գեր խաղացել այդ հարցում և թերևս նրանից են Մարզվանեցու գանգատները: Թեոդիկն, օրինակ, հիշատակում է ոմն ակնցի սեղանավոր մահտեսի Ղազարի անումը, որը իրաւագրկած էր զինք Ա տպագրութեան ատենա¹¹:

Սակայն փաստն այն է, որ այն օրերից մեզ հասած այս երկու խոշոր հրատարակությունները ցույց են տալիս, որ Մարզվանեցու կողմից առաջին անգամ պատրաստված պատկերներն ու զարդերն օգտագործված են նրա տպարանի նախկին աշխատակից Աստվածատուր դպրում, իսկ իր՝ Մարզվանեցու տպագրության մեջ օգտագործված են իր կողմից երկրորդ անգամ պատրաստվածները:

Ավելորդ չեն են, որ Գրիգոր Մարզվանեցին և Աստվածատուր դպրու իրենց հիշատակարաններում նշում են տպարանի աշխատողների միշտ շարք անուններ, որոնք միևնույն ժամանակ աշխատել են և Մարզվանեցու և Աստվածատուրի տպարաններում. դրանք են Ղուկաս, Զաքարիա, Պալի, Ալեքսան, Հակոբ, Ղազար, Տիրատուր, Սրապիոն և Խաչատուր: Այս փաստը գալիս է հաստատելու Գ. Լևոնյանի այն կարծիքը, որ ԺՈ դարի սկզբներին արդեն տպագրությամբ զբաղվում էին ոչ թե պատահական մարդիկ, այլ իրենց արհեստի մեջ հմտացած վարպետներ:

* * *

Անհրաժեշտ ենք գտնում այստեղ փոքր ինչ ավելի մանրամասն խոսել Գրիգոր Մարզվանեցու իր «Յայսմաւուրք»-ի համար պատրաստած պատկերների մասին, քանի որ Մարզվանեցու ժառայությունները մեծ են ոչ միայն որպես տպագրիչի, այլ նաև որպես նկարիչ-փորագրողի:

Որոշ մատենագետներ նշել են, որ Մարզվանեցին զբաղվել է փոքրագրությամբ, սակայն ոչ ոք չի խոսել այն մասին, թե ի՞նչպիսի բարձր արվեստով ու հմտությամբ են կատարված նրա փորագրությունները, և ո՞րքան մեծ դեր է կատարել Մարզվանեցին ԺՈ դարի սկզբի հայ տպագրական և գրաֆիկ արվեստի զարգացման գործում:

Մարզվանեցու «Յայսմաւուրք»-ում զետեղած են մոտ 100 պատկերներ, գլխազարդեր,


¹¹ Թեոդիկ, «Տիպ ու տառ», Կ. Պոլիս, 1912, էջ 55,

վերջնազարդեր և լուսանցազարդեր, որոնց հիմնական բովանդակությունը համապատասխանում է գրքի բովանդակությանը, հետևաբար և կրոնական է: Այդ փորագրի պատկերների մեջ զգալի տեղ են գրավուալ յութետային բազմաթիգուր պատկերները, ինչպես նաև թեմատիկ կոմպոզիցիաները, որոնք արտացոլում են եկեղեցական հայրերի, սրբերի ու նահատակների կյանքի և գործունեության առանձին դրագաները:

Այդպիսին է, օրինակ, Գրիգոր Լուսավորչի կյանքն ու գործունեությունը պատկերող թ և թիւնի էջերի բազմաթիգուր կոմպոզիցիոն նկարը (տե՛ս նկար 3):

Այլողք էջը զբաղեցնող մեծադիր պատկերի կենտրոնում, գաճի վրա նստած հեթանոս Տրդատ թագավորը հարցաքննում է իր առջև ծունկի եկած քրիստոնյա Գրիգորին (Լուսավորչին): Այդ կենտրոնական նկարի շուրջը 14 առանձին շրջանակներում պատկերված են Գրիգոր Լուսավորչի շարչարանքները: Այստեղ, հատկապես Տրդատի և Գրիգոր Լուսավորչի կոմպոզիցիոն նկարը, մարդկանց փիգուները դրված են ծավալային, նյութական ձևերով: Հագուստներն ընդգծված են ամենայն մանրամասնությամբ և ճշգրտությամբ: Փորագրող նկարիչը կարողացել է հմտորեն վերարտադրել տարածությունը, առարկաների հեռավորությունը և մոտիկությունը (պերսպեկտիվան): Նկարիչը սյուների սիմետրիկ շարքերով, առաստաղի կամարներով և հատակի քառանկյունի գծագրություններով կարողացել է ընդդրածակ սրահի ոնալ տպագործություն: Այս կոմպոզիցիոն նկարի թեման անկասկած հայկական է, Գրիգոր Լուսավորչի շարչարանքները նկարագրելիս Մարզվանեցին հավանաբար օգտագործել է Ազգաթանգիպսի մանրամասն շարադրած Գրիգոր Լուսավորչի կյանքի պատմությունը:

Նկարիչ Մարզվանեցու վարպետության մասին է վկայում նաև ԺՈ էջի Ս. Էջմիածնի նկարը (տե՛ս նկար 4): Այստեղ առաջին պլանի վրա գտնվող երեք դեմքերը՝ Տրդատ թագավորը, Խոսրովիդովստը և Գրիգոր Լուսավորիչը պատկերված են իրապաշտական գույներով: Խոսրով դեմքերը խոսուն են և արտահայտիչ: Վարպետորեն են տրված նրանց դինամիկ կեցվածքը, զգեստների մանրամասնությունները և զարդերը: Սակայն այստեղ մեզ ավելի հիացմունք են պատճառուած նկարի ճարտարապետական լուծումները: Ս. Էջմիածնի Տաճարը նկարելիս, նա մեծ տաղանդով է վերարտադրել հեռու և մոտիկ գրմբեթների, կամարների, խոյակների, սյուների և նույնիսկ զարդարանդակների ճիշտ դիրքերը: Գետք է ոչ միայն հմուտ նկարի լի-



Նկար 4— Ս. Եղմիածնի պատկերը Գր. Մարգվանեցու «Յալսմաւուրք»-ի ԾԱ Էջում:



Նկար 5.— Քրիստոսի խաչելությունը (Մարվաննեցու «Յայսմատուրք»-ի Եօնի էջում):

նել, այլ նաև վարպետ փորագրող, կարողանալու համար այդպիսի մանրամասնությամբ և ոելլիքով վերարտադրել ճարտարապետական նման բարդ կառուցվածքի ճիշտ պատկերը:

Դիմանկարների արտահայտման տեսակետից հիշատակության արժանի է Եօնի էջի Քրիստոսի խաչելության մեծադիր պատկերը (տե՛ս նկար 5): Այստեղ նկարիչը կարողացել է ցույց տալ Քրիստոսի խաչի վրա կրած մարմնական տանջանքները, մինչդեռ հոգին արտացոլող դեմքը խաղաղ է ու աննկուն հաշված Քրիստոսի ոտքերի մոտ ողբացող

կանանց կերպարները բավական արտահայտիչ են և կենդանի նրանցից մեկը՝ Ս. Կույսը ծունկի է եկել և երկու ձեռքով այնպես է գրկել խաչը, որ կարծես ուզում է դրանով թեթևացնել Քրիստոսի տառապանքները: Նրա թեմերը անհամաշափ են նրա վտիտ մարմնի հետ՝ չափից ավելի մեծ են ու երկար. սակայն դա ոչ թե նկարչի սխալն է, այլ այդպես ավելի է ընդգծվում նրա մտահղացումը՝ Քրիստոսին օգնելու և պաշտպանելու գաղափարը: Եթե Կույսի դեմքն արտահայտում է անհուսություն և թափիծ, ապա նրա հետևում կանգնած կերպարը, որը Հովհաննես ավետարանին է, իր

և դեմքով, և կեցվածքով արտահայտում է զայրութիւն և ատելություն հրեշավոր եղբռնը կատարողների նկատմամբ։ Առաջին պլանում իր ամբողջ հասակով կանգնած է Մարիամ Մագդաղինացու մոնումենտալ կերպարը, որի վրա նկարիչը ավելի մեծ ուշադրություն է կենտրոնացրել։ Նրա դեմքը միաժամանակ արտահայտում է և թախիծ, և՝ ափսոսանք, և՝ անեծք, և՝ աղոթք։ Նրա կերպարին համեմատ օգնություն թե դատաստան աղերսող նրա ձեռքերը փոքր են, և թվում են անզոր։ Նրա հագուստի մանրամասնությունները նույնպես վկայում են նկարիչ-փորագրող Մարզվանեցու վարպետության ու բարձր արվեստի մասին։

Մարզվանեցու «Յայսմատուրք»-ի մի շարք սկզբնաշեղերում օգտագործված են հայկական մանրանկարչության մեջ վաղուց ընդունված զարդածերը՝ գլխազարդեր, վերջնազարդեր, զարդագրեր և զանազան լուսանցազարդեր (տե՛ս նկար 6)։

Առանձին էշերի վրա մենք հանդիպում ենք նաև կենդանիների և թլումների ոճավորված պատկերների, որոնք հաճախ ներկայացվում են բոսական մոտիվների հետ միաձուլված։ Այդ նկարները, զարդերն ու զարդագրերը իրենց շքեղությամբ և բազմազանությամբ հարստացնում են հայկական զարդարվեստը, ինչպես նաև գրքի գեղարվեստական ձևավորման արվեստը։

Անշուշտ Մարզվանեցին գիտեր իր արվեստի արժեքը, դրանով է բացատրվում, որ 24 տարի հետո՝ 1730 թվականին նա նորից՝ երկրորդ անգամ տպագրում է «Յայսմատուրք»-ը, որի համար օգտագործում է իր առաջին տպագրության տախտակները։ Նրա «Յայսմատուրք»-ի երկրորդ հրատարակության պատկերների վրա պահպանված են հեղինակի առաջին տպագրության մակագրությունները՝ «Մկրտչի որդի Գրիգոր նկարող և փորող պատկերիս, 1155» (1706)։

Մարզվանեցու փորագրած նկարներին և զարդերին մենք հանդիպում ենք նաև հետա-



Նկար 6.— Գրիգոր Մարզվանեցու «Յայսմատուրք»-ի շքեղազարդ էշերից մեկը։

գայում հրատարակված բազմաթիվ գրքերի մեջ։

Այսպիսով, նկարիչ-փորագրող Գրիգոր Մարզվանեցու ստեղծագործությունները մի նոր քայլ են հայ ազգային գրաֆիկական արվեստի գանձարանում և իրենց գեղարվեստական բարձր որակով առանձին տեղ են գրավում ԺՀ դարի առաջին տասնամյակի հայ կերպարվեստի պատմության մեջ։

